ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1121-Ա « 22 » մարտի 2024 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 15-Ի Հ.2626-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով, հաշվի առնելով ՀՀ կադաստրի կոմիտեի 10.10.2023թ. հ.10102023-01-0133 որոշումը, քաղաքացի Իվան Տելեգինի՝ ի դեմս ներկայացուցչի դիմումները (15.02.2024թ. հ.Դ-21305-24, 23.02.2024թ. հ.Դ-25794-24).

1. Երևանի քաղաքապետի 2023 թվականի օգոստոսի 15-ի «Երևան, Աջափնյակ, Վահագնի թաղամաս, Հատիսի փողոց հ.1 հասցեում՝ սեփականության իրավունքով քաղաքացի Իվան Գավրիիլի Տելեգինին պատկանող հողամասում գտնվող ինքնակամ կառույցն օրինականացնելու և հողամասի գործառնական նշանակությունը սահմանելու մասին» հ.2626-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը.

1) Որոշումը լրացնել նոր՝ 1.1 կետով, հետևյալ բովանդակությամբ.

«1.1 Ուժը կորցրած ճանաչել Երևանի քաղաքապետի կողմից 03.12.2019թ. տրված հ.01/18-Խ-4206-544 շինարարության թույլտվությունը:»:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

4. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա.Փամբուխչյանի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ